ՀՏԴ : 929:891.981.09 Աղբալյան

Doi:10.54503/0135-0536-2025.2-101

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Նիկոլ Աղբալյան, Թիֆլիս, Սայաթ-Նովա, հայ միջնադարյան գրականություն, գրականագիտություն, Հայաստանի առաջին Հանրապետություն, նախարար, տարագրություն, Բեյրութի Հայ ճեմարան:

Ամփոփում

Նիկոլ Աղբալյանը XIX դ. վերջի և XX դ. առաջին կեսի հայ նշանավոր մտավորականներից է, գրականագետ, գրաքննադատ, հանրային, քաղաքական, պետական գործիչ ու մանկավարժ: Նրա՝ որպես մարդու, հայի և գործչի ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել իր ծննդավայրը՝ Թիֆլիսի Հավլաբար թաղը, Սայաթ-Նովայի արվեստը, միջնադարյան հայ գրականությունը, եվրոպական ու ռուս գրականությունը և քննադատական միտքը, ինչպես նաև՝ խոր հարգանքն ու սերը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ: Աղբալյանի գրական գործունեությունը սկսվել է 1896 թ. Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում տպագրված գրախոսականով և շարունակվել ընդհուպ մինչև մահ: Այդ տարիների ընթացքում նա գրել է գրականագիտական, քննադատական և լեզվաբանական հարյուրավոր աշխատություններ, որոնցից շատերն իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերում:

1910-ական թվականների երկրորդ կեսին Ն. Աղբալյանը ժամանակի հրամայականով ավելի շատ զբաղվել է քաղաքական գործունեությամբ, եղել հայկական կամավորական գնդերի կազմակերպիչներից, այնուհետև՝ Ազգային բյուրոյի (1912–1917 թթ.) և նրան փոխարինած Ազգային խորհրդի (1917–1918 թթ.) անդամ: 1918 թ. մայիսին ակտիվորեն մասնակցել է Հայաստանի անկախության գործընթացին, դարձել Հայաստանի առաջին խորհրդարանի (Հայաստանի խորհուրդ) պատգամավոր, իսկ 1919–1920 թթ. լայն գործունեություն է ծավալել որպես Հայաստանի առաջին Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար:

1920 թ. դեկտեմբերին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1921 թ. ապրիլին, Աղբալյանը տարագրվել է Պարսկաստան: Տա-

* *Ներկայացվել է 03. III. 2025 թ., գրախոսվել է 14. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

բագրության երկարաձիգ տարիների ընթացքում մշտապես տառապելով իր ընտանիքի և հայրենիքի կարոտից՝ նա զբաղվել է հիմնականում մանկավարժությամբ և գրական գործունեությամբ: 1928 թ. մայիսին՝ Հայաստանի անկախության 10-րդ տարեդարձի օրը, նա Լևոն Շանթի ու ևս 7 համախոհների հետ Կահիրեում հիմնել է Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերությունը (այժմ՝ Համազգային հայ կրթական և մշակութային միություն), որն իր հայանպաստ գործունեությունը հաջողությամբ շարունակում է մինչ օրս: 1929 թ. Աղբալյանը և Շանթը Բեյրութում հիմնել են Հայ ճեմարանը, ուր հայեցի կրթություն են ստացել սփյուռքահայերի բազմաթիվ սերունդներ: Այդ կրթօջախում էլ Աղբալյանը դասավանդել է հայ գրականություն և գրաբար՝ մինչև իր մահը հայ երեխաներին սեր ներարկելով հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության ու մշակույթի նկատմամբ:

Իր բեղմնավոր գործունեության համար Աղբալյանը և՛ կենդանության օրոք, և՛ մահից հետո Սփյուռքում արժանացել է մեծ սիրո ու հարգանքի, մինչդեռ Խորհրդային Հայաստանում նրա անունը հիշել են միայն 1970-ականների վերջերին: «Վերադարձը» հայրենիք տեղի է ունեցել արդեն Հայաստանի անկախացումից՝ 1991 թվականից հետո, և այսօր նա իրավացիորեն արժանի տեղ է գրավում հայ մեծանուն գործիչների շարքում:

Նախաբան

Ապրելով հայ ժողովրդի պատմության բախտորոշ մի ժամանակաշրջանում՝ Ն. Աղբալյանն աշխատեց հնարավորության սահմաններում նպաստել իր ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանն ու անկախության ձեռքբերմանը, որպես քաղաքական ու պետական գործիչ՝ արեց հնարավորն ու անհնարինը՝ իր երկիրը մի լուսավոր ուղի հանելու համար: Որտեղ էլ նա եղավ և ինչ գործով էլ զբաղվեց, ամենուրեք և միշտ նրա մտքում հայ ժողովուրդն էր, նրա գրականությունն ու մշակույթը և նրա վաղվա լուսավոր օրվա երազանքը ...



Նրա երազանքն էր հին ու նոր օրերի իր ընկեր-բարեկամների հետ խնջույքի նստել Երևանում՝ Հրազդանի ափին, կամ Վանի Այգեստանում՝ բարդիների տակ, կամ Մշո Սբ. Կարապետի հովանու ներքո՝ Սասնո լեռների դիմաց ... Նրա երազանքն էր իր երիտասարդ տարիների մտերիմ բարեկամի՝ Ավ. Իսահակյանի գրական գործունեության 50-ամյակը տոնել Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանում[1], բայց ... նրան բախտ չվիճակվեց արժանանալ անգամ իր ընտանիքի տեսությանը ...

Ն. Աղբալյանի անձն ու գործն արդեն իր կենդանության օրոք շատերի համար առասպել ու լեգենդ էին դարձել, իսկ մահը ընդամենը եկավ հաստատելու այն միտքը, որ հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկի կյանքն ու գործը դեռ երկար տարիներ դառնալու են ուսումնասիրության առարկա, և

---

[1] *Տե՛ս* Աղբալեան. 1946, 3:

լուսավոր գաղափարներով առաջնորդվելու են հայության բազմաթիվ սերունդներ:

Մարդու, մտավորականի, քաղաքական-պետական գործչի ձևավորման ակունքները

Նիկոլ Պողոսի Աղբալյանը ծնվել է 1875 թ.[2] մարտի 24-ին Թիֆլիսում՝ հայաշատ ու հայաշունչ Հավլաբար թաղամասում: Ծննդավայրի՝ գրեթե բոլոր հայ հեղինակների համար կարևոր իրողությունը կրկնակի կարևոր է Աղբալյանի պարագայում, քանի որ Հավլաբարում էր ծնվել ու ապրել Սայաթ-Նովան, որի մասին հիշողությունները և ապրած ժամանակների հետքերը դեռ լիովին չէին անհետացել Աղբալյանի մանկության տարիներին[3]: Հավլաբարցի համեստ, խնջույքների ժամանակ պատմություններ պատմել ու երգել սիրող փոռպան Պողոսի զավակը իր ծննդյան օրից լսել է Սայաթ-Նովայի երգերը՝ հայ ոգու մեծագույն արտահայտություններից մեկը, և սիրել այն աստիճան, որ սովորել է դրանցից շատերը, երգել ու հետագայում սովորեցրել ուրիշների: Նույնիսկ, իր ասելով, նշանավոր կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին խնդրել է Աղբալյանին երգել Սայաթ-Նովայի երգերը և ձայնագրել է դրանք[4]:

Ժամանակակիցների վկայությամբ՝ Աղբալյանը շատ լավ է երգել[5], և նրա սերը մեծ աշուղ-բանաստեղծի ու երգչի արվեստի նկատմամբ չի մարել ընդհուպ մինչև մահ: Նրա գործընկեր և մտերիմ բարեկամ Արշակ Հովհաննիսյանի վկայությամբ՝ մահվանից առաջ հաճախ է երգել. «Երեկոյան, վերջացուցած իր բոլոր այցելությունները, իր մեծ տան երկրորդ յարկի ընդունարանում Աղբալեան զուսպ ու անուշ ձայնով երգում էր Սայաթ Նովայի երգերը: Երգում էր յաճախ, երբեմն յուզում այնքա՜ն, որ արցունքով լցում էին աչքերը, ու երգը վերջ էր գտնում»[6]: Ահա այսպես Սայաթ-Նովան իր հմայիչ արվեստով ուղեկցել է Աղբալյանին ծնված օրից մինչև գերեզման՝ դառնալով հայ մշակույթի, հայ երգի ու գրականության նկատմամբ նրա անսպառ սիրո ու պաշտամունքի հզոր ազդակներից մեկը:

---

[2] *Մեզ անհայտ է որպես նրա ծննդյան թվական նշվող և ավելի հաճախ շրջանառվող 1873 թվականի աղբյուրը, մինչդեռ հենց ինքը երկու տեղ հստակորեն նշել է 1875 թվականը՝ որպես իր ծննդյան տարեթիվ՝ 1919 թ. գրած ինքնակենսագրության մեջ [տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 307, ց. 1, գ. 18, թ. 28, մեքենագիր օրինակ Աղբալյանի ստորագրությամբ] և 1928 թ. Սիմոն Վրացյանի խնդրանք-պարտադրանքով իր ձեռքով գրված ինքնակենսագրական տեղեկություններում (տե՛ս Ա ղ բ ա լ ե ա ն. 1948, 204–205):*

[3] *Ա ղ բ ա լ ե ա ն. 1944ա:*

[4] *Ա ղ բ ա լ ե ա ն. 1944բ: Նման ձայնագրություններ, որքան տեղյակ ենք, առ այսօր հայտնի չեն: Ի դեպ, Ս. Վրացյանն Աղբալյանի մասին գրած իր ընդարձակ հուշերում ափսոսանք է հայտնել այդ առիթով. «Կարելի չէ ներել նրա Լիբանանի ընկերներին, որ գոնէ մի քանի ձայնապնակ պատրաստել չուին յաւերժացնելու համար Նիկոլի ձայնը» (Վ ր ա ց ե ա ն. 1957դ, 46):*

[5] *Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 20. III. 1913, Վ ր ա ց ե ա ն. 1964, 40–41, Մ ա ր ո ւ թ ե ա ն. 1977 և այլն:*

[6] *Ա ր շ ա կ ո ւ ն ի (Յ ո վ հ ա ն ն ի ս ե ա ն). 1951, 78:*

Կրթությունը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (ավարտել է 1892-ին) և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ուր ուսանել է երկու տարի, էլ ավելի է ուժգնացրել ու գիտակից դարձրել այդ սերը: Ընթերցանության անհագ կիրքը, գրքի նկատմամբ պաշտամունքը ծնվել են հենց այդ տարիներին և դարձյալ չեն մարել մինչև մահ: Կարդացել է հայ, ռուս, եվրոպական գրականություն, բառացիորեն կլանել ամեն ինչ: «Նիկոլը զարմանալի ընթերցող էր, նա կարդում էր ամէն ինչ, որ ընկնում էր ձեռքը: Գիտութեան և արուեստի բոլոր ճիւղերից: Սպունգի պէս ծծում էր գիտութիւնն ու գիտելիքները ...»[7],– վկայում է Ս. Վրացյանը: Այս տողերը վերաբերում են 1928 թ. և լիովին բնութագրում Աղբալյան ընթերցողին հատկապես 1890-ական թվականներին, երբ ուսումնասեր պատանին իր ունակությունները դրսևորելու համար մտավոր պաշար էր հավաքում: Նրա հետաքրքրությունների շրջանակում առանձին տեղ էր գրավում հայ միջնադարյան գրականությունը, հատկապես՝ մատենագրությունը, որտեղ ամբողջ խորությամբ ու շքեղությամբ մարմնավորվել է հայ ոգին: Իսկ խորքային ծանոթությունը եվրոպական փիլիսոփայությանը, գրականությանն ու գրականագիտական-քննադատական մտքին ավելի է լայնացրել նրա մտահորիզոնը և վճռական դեր կատարել աշխարհայացքի ձևավորման ու գրական հետագա ուղու ընտրության հարցում: Օգյուստ Կոնտ, Հիպոլիտ Տեն, Գեորգ Բրանդես, Վիսարիոն Բելինսկի և Ալեքսանդր Պիպին՝ ահա այն հեղինակները, որոնք դարձել են Աղբալյանի գրական ուսուցիչները, և որոնց անունները հաճախ են հանդիպում նրա գրվածքներում:

Անկարելի է շրջանցել նրա՝ որպես մարդու, հայի և հասարակական-քաղաքական գործչի ձևավորման գործում մեծ դեր խաղացած մեկ այլ իրողություն. վաղ մանկական տարիներից Ն. Աղբալյանը խոր ակնածանք ու սեր է տածել Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ, եղել նրա հավատավոր զավակն ու հետևորդը: Այդ սերն ու ակնածանքն առավել ուժգնացել են համայն հայության անդրանիկ սրբավայրի՝ Էջմիածնի Մայր տաճարի հարևանությամբ՝ Գևորգյան ճեմարանում սովորելու ընթացքում: Ճիշտ է, ազգային վեհ գաղափարներով տարված պատանին, ստանալով վկայագիր, 1894 թ. ապրիլին հեռացել է ճեմարանից՝ առանց այն ավարտելու[8], և նույն թվականին գրած իր «Հիշատակարան»-ում դաժան քննադատության ու ծաղրի է ենթարկել հայ տգետ հոգևորականներին[9], այնուամենայնիվ, նրա մեջ մշտապես անսասան է եղել ակնածանքը Հայ եկեղեցու և նրա բարձրագույն ներկայացուցիչների հանդեպ, և դրա ապացույցները բազմաթիվ են՝ սփռված նրա գրվածքներում ու նրա մասին հուշերում: Ըստ մի վկայության՝ նա դեռ երեխա ժամանակ այնքան տեղյակ է եղել Հայ եկեղեցու ծիսակատարություններին, որ կիրակի և տոն օրերին, հավաքելով ընկերներին, փողոցում, որպես խաղ, ինքն էլ է պատարագ մատուցել «չնորհքով ու հաճելի ձայնով՝ ի մեծ զուարճութիւն ընկերների եւ ի զարմանս ու ի ցաւ փողոցով անցնող մեծերի»[10]: Տարիներ անց, երբ Աղբալյանը քաջածանոթ էր հայ միջնադարյան գրականությանը և այնքան էր ուսումնա-

---

[7] Վ ր ա ց ե ա ն. 1957դ, 44:

[8] Ա ն ա ն յ ա ն. 2002, 12:

[9] Ա ղ բ ա լ յ ա ն. 1989, 113–115:

[10] Ա ս տ ո ւ ա ծ ա տ ր ե ա ն. 1947, 55:

սիրել «Պատարագամատույցը», որ «կարող էր տիրացուի, քահանայի եւ բարձրաստիճան հոգեւորականի պաշտօնները անթերի կատարել պատարագի միջոցին եւ միաժամանակ»[11], այս խաղը պիտի վերածվեր իսկական պատարագի, այն էլ այնպիսի պայմաններում, որ ներկաները միաժամանակ սարսուռ ու հիացմունք պիտի ապրեին: 1921 թ. փետրվարին, երբ Աղբալյանը բանտարկված էր Երևանի բանտում և ժամ առ ժամ սպասում էր իր արյունալի վախճանին, իր մտերիմ բարեկամ Շանթի վկայությամբ, նա փորձված քահանայի նման պատարագ է մատուցել իր և նենգաբար բանտարկված մյուսների փրկության համար[12]: Արհամարհելով իրենց կոչումն աշխարհիկ վայելքներով փոխարինող հոգևորականներին՝ նա հետագայում ևս իր անվերապահ հարգանքն է ցուցաբերել Հայ եկեղեցուն ու նրա ականավոր ներկայացուցիչներին, ինչպես, օրինակ, Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբգեն Ա-ին, որի մահվան առիթով 1936-ին վեճ է ունեցել Հայ ճեմարանի մյուս տնօրենի՝ Լ. Շանթի հետ և հրաժարվել դաս անելուց, երբ վերջինս չի ընդունել դասերը դադարեցնելու իր պահանջը[13]:

Կյանքի բովում. գրականագետն ու քննադատը

Մանկության ու պատանեկան տարիներից գործելու ազդակներ ստանալով և տարվելով իր ժողովրդին օգտակար լինելու, նրա առաջադիմության գործին «նվիրված մարտիկներից» մեկը դառնալու գաղափարով[14] երիտասարդ Ն. Աղբալյանը, կյանքին ծանոթ գրեթե բացառապես գրքերից, նետվել է նույն այդ կյանքի մեջ՝ երկու տարի, կարիքից դրդված, ուսուցչություն անելով Կաղզվանում և Վերին Ագուլիսում, այնուհետև երեք տարի մասնավոր դասեր տալով Թիֆլիսում:

Կովկասյան փոխարքայության կենտրոն Թիֆլիսը, ուր հնուց ի վեր մեծ թվով հայեր էին ապրում, XIX դ. վերջին և XX դ. սկզբին դարձել էր Այսրկովկասի հայության մշակութային կենտրոնը և հնարավորություն ընձեռեց երիտասարդ Աղբալյանին՝ ցուցաբերելու իր ամբարած գիտելիքներն ու ունակությունները: Նրա համար, որպես գրական քննադատի և գրականագետի, ճակատագրական է եղել հանդիպումը Թիֆլիսի՝ այդ ժամանակ, թերևս, ամենաազատամիտ ու առաջադեմ «Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանի հետ: «Մուրճ»-ն իր ուղղությամբ լավագույնս էր համապատասխանում Աղբալյանի նախասիրություններին. այդ հեղինակավոր ամսագրի 1896 թ. 9-րդ համարում «Ն. Աղբալեան» ստորագրությամբ տպագրվել է բոլորին անհայտ քննադատի առաջին գրախոսությունն Ակ. Շիրվանզադեի «Կրակը» վիպակի մասին (էջ 1172–1174): «Ա. Արասխանյանի ուշադրությունը երևան է հանում մի շնորհալի ուժ ևս»[15], և ամսագրի հետագա համարներում երեք տարվա ընթացքում տպագրվել են Աղբալյանի մի քանի տասնյակ գրախոսություններ և «Ղոչաղը իբրև տիպ հայ վիպագրության մեջ» ու «Վ. Գ. Բելինսկի» ուսումնասիրությունները, որոնք որոշակի համբավ են բերել երիտասարդ քննադատին: Դա նրան հնարավորություն է ընձեռել

[11] Ա լ ա ն ե ա ն. 1951, 4:
[12] Լեւոն Շանթը իր մասին. 1960, 32:
[13] «Ալիք» (Թեհրան), 03. I. 1973:
[14] Տե՛ս Ա ղ բ ա լ յ ա ն. 1989, 114, Ա ն ա ն յ ա ն. 2002, 13:
[15] Ա ն ա ն յ ա ն. 2002, 24:

ծանոթանալու Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի, Ղ. Աղայանի, Լ. Շանթի և Դ. Դեմիրճյանի հետ ու դառնալու 1899 թ. դեկտեմբերին հիմնադրված «Վերնատան» անդամներից մեկը[16]: «Վերնատուն»-ը, անկասկած, նույնպես իր բացառիկ ազդեցությունն է թողել երիտասարդ քննադատի աշխարհայացքի մշակման գործում, նրա գեղագիտական հայացքների հետագա զարգացման վրա:

1900-ական թվականներն Աղբալյանի համար նշանավորվել են կանոնավոր համալսարանական կրթություն ստանալու ջանքերով, ինքնակրթությամբ և իր կոչումն ու տեղը կյանքում գտնելուն ուղղված անդուլ աշխատանքով: 1900–1901 թթ.[17] որպես ազատ ունկնդիր նա սովորել է Մոսկվայի համալսարանի պատմալեզվաբանական բաժնում, 1902–1904 թթ. Սանկտ Պետերբուրգի գրադարաններում և պահոցներում նյութեր է հավաքել իր ապագա գրքերի՝ «Հայոց գրականության պատմության» համար: 1904 թ. Ն. Աղբալյանն անդամագրվել է ՀՅԴ-ին:

30 տարին դեռ չբոլորած գրականագետ-քննադատը մեծ ծրագրեր ուներ: «Այս՝ համարձակվում եմ ասել, հսկա ձեռնարկությունը (Պետերբուրգում նյութեր հավաքելը – Ա. Մ.) մի նախապատրաստական աշխատանք է իմ ապագա հոդվածների, կենսագրությունների, ընորոշումների և՝ իբր վախճան ու վերջնական նպատակ այս ամենի՝ «Հայոց նոր գրականության պատմություն», եթե մի կերպ Վիեննա ընկա, և «Ռուսահայ գրականության պատմություն», եթե այս քանդված երկրում փտելու դատապարտվիմ վերջնականապես»[18],– Պետերբուրգից գրել է Ավ. Իսահակյանին 1902 թ. դեկտեմբերի 6-ին: Այս մտահղացման իրագործումով նա հակված էր բոլորին ներկայացնելու հայ գրականության, հայ մշակույթի համամարդկային արժեքը, բացահայտելու հայ ժողովրդի ազգային ոգին ու նկարագիրը՝ մատնանշելով հայ լինելու և հայ մնալու ուղիներն ու դրանով իսկ հերքելով իր մեկ այլ նամակում արտահայտած դժգոհությունը. «Ոչ ոք չի մտածում, որ հայը պիտի հայ մնա և ցույց տա իրան աշխարհին ոչ իբրև եվրոպացի, այլ իբրև հայ»[19]: Բայց ճակատագիրն այլ բան էր նախանշել երիտասարդ մտավորականի համար. իր վիճակը 1904-ի հունվարի 7-ին Պետերբուրգից Թումանյանին գրած նամակում ներկայացրել է այսպես. «... մեր Ավետիքը մի լավ բան ունի ասած.

---

[16] *1900 թ. մարտին Ն. Աղբալյանը նամակ է գրել Ավ. Արասխանյանին, որից երևում է՝ նա ծանոթ է Հովհ. Թումանյանի հետ (Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 23–24): Աղբալյանի՝ վերնականներին, ինչպես նաև վերնականների՝ միմյանց գրած նամակներում խմբակի անդամների առնչությամբ արտահայտված ջերմությունից ակնհայտ է, որ Աղբալյանը եղել է նրա հիմնադիր անդամներից (տե՛ս Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 26, 29, 33, 36, 38, 44, Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2007, 43–51, Ի ս ա հ ա կ յ ա ն. 2017, 47–56 և այլն):*

[17] *Գ. Անանյանն Աղբալյանի Մոսկվա գնալը վերագրել է 1899 թ. (Ա ն ա ն յ ա ն. 2002, 25), որը նշել է ինքը՝ Աղբալյանն ինքնակենսագրության մեջ (ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 18, թ. 28): Բայց դա ակնհայտ վրիպում է (տե՛ս Ա ն ա ն յ ա ն. 2002, 25, Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 35–38, ինչպես նաև 24–44 էջերի մյուս նամակները):*

[18] *Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 28:*

[19] *Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 35:*

Սազը չի թողնում, որ հայդուկ դառնամ,
Սուրը չի թողնում, որ աշուղ դառնամ:

Հիմի իմն է դառել. դասը չի թողնում, որ գրող դառնամ, գիրը չի թողնում – հացատեր դառնամ... »[20]: Նա ստիպված էր միաժամանակ մի քանի գործ անել, ինչը բնորոշ է եղել նրան ողջ կյանքի ընթացքում: 1906–1907 թթ. ուսանել է Լոզանի համալսարանում, բայց նյութական անապահովությունը խափանել է բարձրագույն կրթություն ստանալու բոլոր ծրագրերը. 1907-ի փետրվարին Լոզանից Թումանյանին գրած հերթական աղաչական նամակը «պարտքակոխ և սովակոխ եղած»[21] Աղբալյանն ավարտել է դառը խոստովանությամբ. «Այ քեզ նամակ. փոխանակ գրականությունից և այլն գրելուց, գրում եմ չորս երես դրամի մասին. գրականությունը սիրելու համար էլ պետք է կուշտ լինել»[22]: Տարիներ անց նա նույնպես եկել է հայ հեղինակի համար անեծք դարձած այն մտքին, որ «գրելու համար մարդու միտքը պետք է ազատ լինի ամեն տեսակ ոչ գրական հոգսերից, այլապես լավ բան չի դուրս գա դրանից»[23]: Եվս երկու տարի անց Ա. Զիլինգարյանին գրած մեկ այլ նամակում նա ցավով արձանագրել է իր համակերպումը ճակատագրին. «Վերջապես՝ ամեն մարդ իր ճակատագիրն ունի, իմն էլ այս է. – գրող ծնվել և ամեն բան անել, բացի գրականությունից»[24]:

Այստեղ Աղբալյանը, իհարկե, իրավացի չէ. և՛ 1900-ական թվականներին, և՛ հետագայում նա կուսակցական, հանրային, պետականաշինական, մանկավարժական գործունեությանը զուգընթաց, այնուամենայնիվ, ինչ-որ չափով նաև «գրականություն է արել», գրել է բազմաթիվ գրախոսություններ ու հոդվածներ, այդ թվում՝ Ա. Զեխովի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի և Լ. Տոլստոյի մասին, որոնք նրա քննադատական-վերլուծական գրվածքների լավագույն նմուշներից են: Իսկ 1912 թ. հոկտեմբերին, երբ Թիֆլիսում ստեղծվել է Հայ գրողների կովկասյան ընկերությունը, ակտիվորեն մասնակցել է նրա աշխատանքներին՝ դառնալով ընկերության գրական երեկույթների հերթական (պատասխանատու)[25] և ասուլիսների դիսավոր դեմքերից:

1913 թ. մարտի 14-ին ընկերության 6-րդ երեկույթում «Ժողովրդական երգիչ Սայաթ-Նովան» թեմայով նա կարդացել է դասախոսություն, որը ներկաների կողմից ընդունվել է ծափերով, իսկ հետո ներկա հասարակության խնդրանքով երգել է Սայաթ-Նովայի «Դուն էն գլխեն իմաստուն ես» երգը՝ կրկին արժանանալով ջերմ ծափահարությունների[26]:

Ընդհանրապես 1910-ական թվականների առաջին կեսը բեղմնավոր է եղել Աղբալյան գրական գործչի համար. «Հորիզոն» թերթում և իր հիմնադրած «Նոր

---

[20] Աղբալյան. 2003, 39–40: Իսահակյանի «Մասրսա Մանուկը» և «Գողթան քնարը, որ ազատության... » պոեմներից վերցված այս միտքը հետագայում տեղ պետք է գտներ «Պատմութիւն Հայոց գրականութեան» հատորի «Խօսք ընթերցողին» նախաբանում (տե՛ս Աղբալեան. 1970, 10):

[21] Աղբալյան. 2003, 58:

[22] Աղբալյան. 2003, 59:

[23] 1924 թ. հուլիսի 31-ին Ալեքսանդրիայից Արտաշես Զիլինգարյանին գրած նամակից (տե՛ս Աղբալյան. 2003, 104):

[24] Աղբալյան. 2003, 114:

[25] Տե՛ս Հովհաննիսյան. 2007, 142:

[26] «Հորիզոն», 20.III. 1913: Սա Աղբալյանի միակ դասախոսությունը չէր. նա դասախոսություններ է կարդացել նաև Լ. Շանթի, Գ. Սունդուկյանի, Դ. Դեմիրճյանի և ուրիշների մասին:

հոսանք» ամսագրում նա տպագրել է հարյուրավոր գրախոսություններ ու գրականագիտական, հրապարակախոսական հոդվածներ, որոնցից շատերում ակնհայտ են գրական և քաղաքական երևույթների խորքը թափանցելու, արժեքավորն անարժեքից, առողջ հատիկը հիվանդից ու որոմից զատելու նրա զարմանալի ունակությունը, հստակ չափանիշները և բարձր ճաշակը: Նա նույնիսկ նոր անվանում է հորինել՝ «տգիտական գրականություն»՝ բնորոշելու համար այն անարժեք գրքերը, որոնք ոչ մի օգտակար բան չեն տալիս մարդու մտքին ու հոգուն և նույնիսկ արթնացնում են նրա մեջ ստոր բնազդներ ու լցնում գլուխը վնասակար մտքերով[27]:

1910-ական թվականների երկրորդ կեսին էլ նա հավատարիմ է մնացել իր կոչմանը՝ անդրադառնալով ուշադրության արժանի հեղինակներին ու արժևորելով նրանց ստեղծագործությունը հայ գրականության ապագայի տեսակետից: Այդպիսին են Ստեփան Զորյանի անդրանիկ «Տխուր մարդիկ» պատմվածքների ժողովածուի առաջաբանը և 1919 թ. հոկտեմբերի 16-ին Երևանում Եղիշե Չարենցի մասին կարդացած զեկուցումը[28], որոնք փաստացի արձանագրել են երկու նոր տաղանդների մուտքը հայ գրականություն և, ըստ էության, հանրահռչակել նրանց անունը:

Քաղաքական ու պետական գործիչը

1910-ական թվականների երկրորդ կեսին, սակայն, գրական հարցերը չէին, որ առաջնային էին Ն. Աղբալյանի համար: 1914-ին սկսված Առաջին աշխարհամարտն Արևմտյան Հայաստանը վերջապես թուրքական լծից ազատելու հույսեր էր արթնացրել, և խանդավառ հայորդիները կամավորական գնդեր էին կազմավորում՝ ռուսական զորքերի հետ ազատագրելու հայկական հողերը դարավոր ոսոխից: Այդ օրերին Աղբալյանը կամավորական շարժման կիզակետում էր, իր ասելով՝ «1914 թ-ից վարել եմ կամաւորական գործը իբր Կարգադրիչ Յանձնաժողովի անդամ, իսկ յետոյ իբր պահեստի բատալիոնի (գումարտակի – Ա. Մ.) պետ»[29]: Այս համեստ բառերի հետևում քրտնաջան գործունեություն և հոգեկան ծանր դրամաներ են թաքնված, որ ներկայացրել է Աղբալյանի օգնականը՝ Ս. Վրացյանը նրա մասին գրած հուշերում. մանրակրկիտ ու անձնվեր աշխատանք՝ հայ կամավորականներին անհրաժեշտ ամեն ինչով ապահովելու, «բարեխիղճ, բծախնդիր ու պարկեշտ» վերաբերմունք իրեն վստահված գործին[30], «սարսափելի տպավորություն» Մեծ եղեռնի մասին լուրերը լսելուց, բայց և մի զարմանալի լավատեսություն, որ «այս աղէտն էլ կ'անցնի»[31], սրտաբուխ աղոթք Նարեկացու գերեզմանին՝ հայ ժողովրդին այդ և վերահաս այլ աղետներից փրկելու համար, և խոր ափսոսանք ու հիասթափություն ռուսական զորքերի նահանջի ու 1916-ին կամավորական գնդերը ցրելու առիթով[32]: Հոգեկան ծանր, «գրեթե խելագարվելու վիճակից», ըստ Վրացյանի, Աղբալյանին փրկել է 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում:

---

[27] Տե՛ս Աղբալյանի գրախոսությունն Ա. Ջանյանի «Լիլի» գրքույկի մասին («Հորիզոն», 02. X. 1912):

[28] Տե՛ս Ա ն ա ն յ ա ն. 2002, 69–70, Գ ա ս պ ա ր յ ա ն. 2022, 384–387 և այլն:

[29] ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 18, թ. 28:

[30] Վ ր ա ց ե ա ն. 1957ա, 70:

[31] Վ ր ա ց ե ա ն. 1957ա, 71:

[32] Վ ր ա ց ե ա ն. 1957ա, 68–72:

Փետրվարյան հեղափոխությունը շատերի մոտ էր ոգևորություն և մեծ սպասումներ առաջացրել՝ հայության ապագայի տեսակետից համարվելով բարեբախտ իրադարձություն. Աղբալյանը ևս նրանց թվում էր: 1917-ին՝ հեղափոխությունից անմիջապես հետո, Բաքվի «Արև» լրագրում նա հրապարակել է մի շարք քաղաքական հոդվածներ ու վերլուծություններ, որոնցում արտահայտել է իր անվերապահ համակրանքը հեղափոխության նկատմամբ և սպասումները: Բայց Աղբալյանին և մեծ հույսեր փայփայող մյուսներին դարձյալ սպասում էր մեծ հիասթափություն: Օրեր ու ամիսներ անց, երբ պարզվել է Ժամանակավոր կառավարության ապիկարությունը՝ հսկա երկրում կարգ ու կանոն հաստատելու, հարձակվող գերմանացիներին կանգնեցնելու, ժողովրդին հացով ապահովելու և կենսական այլ հարցեր լուծելու գործում, Աղբալյանի խանդավառությունն աստիճանաբար փոխվել է զարմանքի, զարմանքը՝ անհանգստության, և անհանգստությունը՝ տագնապի, մանավանդ, երբ հոկտեմբերի 25-ի հեղաշրջումով իշխանությունը բռնազավթել են բոլշևիկները, և ռուսական կազմալուծված զորքը սկսել է լքել Կովկասյան ճակատը: Այս ամենն արտահայտվել է «Հորիզոն», որի երեք խմբագիրներից էր[33], և իր խմբագրած «Ազատամարտ» ու «Ռազմիկ» լրագրերում հրապարակած հոդվածներում ու վերլուծություններում, որոնք, ինչպես և նրա 1917 թ. հրապարակագրությունն ընդհանրապես, մինչ օրս գրեթե լիակատար անուշադրության են մատնվել, մինչդեռ նրա գրվածքներից շատերն արժանի են լուրջ ուշադրության և գիտական ուսումնասիրության:

Թիֆլիսում Աղբալյանի հանրային և քաղաքական բուռն գործունեությունը չի սահմանափակվել միայն հրապարակագրությամբ: Եղել է նախ Ազգային բյուրոյի (Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո, 1912 թ. հոկտեմբեր – 1917 թ. հոկտեմբեր), ապա նրան փոխարինած Ազգային խորհրդի (Հայոց ազգային խորհուրդ, Արևելահայ ազգային խորհուրդ, 1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. հուլիս) անդամ, ակտիվորեն մասնակցել է վերջինիս ստեղծմանը և լծվել տքնաջան աշխատանքի՝ ուղիներ որոնելով ծանր ժամանակներում հայ ժողովրդին նոր աղետներից փրկելու համար:

Քաղաքական դեպքերի զարգացումը, ի վերջո, հասցրել է 1918 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակմանը: Ն. Աղբալյանը, որն իր ազդու խոսքով՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր, միշտ գտնվում էր իրադարձությունների կենտրոնում, ամենաանմիջական մասնակցությունն է ունեցել նաև այդ պատմական իրադարձությանը: Ս. Վրացյանի վկայությամբ՝ Ազգային խորհուրդը Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումից հետո (մայիսի 26-ին և 27-ին) կանգնել է պատասխանատու որոշում ընդունելու հրամայականի առջև. պետք էր արագ արձագանքել հարևաններին՝ հռչակելով Հայաստանի անկախությունը, բայց Ազգային խորհրդում կասկածամիտներ ու տատանվողներ կային, որոնց համար թեկուզև բոլշևիկյան Ռուսաստանից կտրվելը չափազանց վտանգավոր էր թվում: Այդ վճռորոշ պահին հենց Աղբալյանն է իր ելույթով կշեռքի նժարը թեքել անկախության հռչակման կողմը[34]:

Այսպես է կերտվել պատմությունը, և նրա կերտողներից մեկը գրականագետ ու քննադատ, հռետոր, հանրային ու քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալյանն

[33] Վ ր ա ց ե ա ն. 1957բ, 52:
[34] Վ ր ա ց ե ա ն. 1957բ, 58:

էր, որը շուտով դարձել է նաև պետական գործիչ՝ Հայաստանի առաջին խորհրդարանի պատգամավոր (1918-ի օգոստոսի 1 – 1919-ի ապրիլի 27)[35], ապա՝ Հանրային կրթության և արվեստի նախարար (1919-ի օգոստոսի 10 – 1920-ի մայիսի 5): Ե՛վ պատգամավորի, և՛ նախարարի պարտականությունները նա կատարել է իրեն հատուկ բարեխղճությամբ, ակտիվորեն մասնակցել է օրինաստեղծ աշխատանքներին և հանրապետության շուրջ տեղի ունեցող իրադարձություններին՝ իր ուժն ու եռանդը, գիտելիքները և ունակություններն ի սպաս դնելով կյանքը նորաստեղծ հանրապետությունում շատ թե քիչ բարվոքելու ու երկրի արտաքին անվտանգության գործին: Նա մասնակցել է հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցերի քննարկմանը, բայց նրա ջանքերն առավելապես ուղղված են եղել երկրում կրթական գործի բարելավմանը: Ըստ Ս. Վրացյանի՝ «Նրան է պատկանում պատիվը Հայաստանի Հանրապետության կրթական գործի կազմակերպությանը: Հայաստանի Խորհուրդի և ապա Խորհրդարանի կրթական-մշակութային գործին վերաբերող բոլոր օրէնքները, կարելի է ասել, Աղբալեանի մտքի դրոշմը կը կրեն իրենց վրայ: Նա անխոնջ աշխատող էր Խորհրդարանական յանձնախմբում և հիանալի զեկուցող Խորհրդարանի նիստերին»[36]: Շատ ավելի արդյունավետ է եղել նրա աշխատանքը Հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնում: Աղբալյանի նախաձեռնությամբ է խորհրդարանում ընդունվել օրենքը ընդհանուր և պարտադիր ուսուցման մասին, մի շարք այլ նախաձեռնություններով կարգավորվել են կրթական գործը, մշակութային գործունեությունը, գրադարանային ու հրատարակչական գործերի կազմակերպումը և այսպես շարունակ[37]: Այս ամենին զուգընթաց՝ նրա ուշադրությունից չի վրիպել նաև գրական գործի կազմակերպումը: Հայ գրողների կովկասյան ընկերության երևանաբնակ անդամների աջակցության նա ստեղծել է գրական նոր ընկերություն, որը կոչվում էր Հայաստանի գրական ընկերություն, և որի նիստերից մեկում էլ 1919 թ. կարդացել է իր նշանավոր զեկուցումը Եղիշե Չարենցի մասին:

Այս շրջանում Ն. Աղբալյանի գործունեության պսակը եղավ Հայաստանի (Երևանի) համալսարանի բացումն Ալեքսանդրապոլում 1920 թ. հունվարի 31-ին: Հայաստանի նորանկախ հանրապետության անդրանիկ համալսարանի ստեղծման աշխատանքներն սկսվել էին ավելի վաղ. դեռ 1919 թ. մայիսի 16-ին՝ Աղբալյանի նախարար նշանակվելուց առաջ, ՀՀ կառավարությունը (վարչապետ՝ Ալեքսանդր Խատիսյան) որոշում էր ընդունել Երևանում համալսարան հիմնադրելու վերաբերյալ՝ գումար հատկացնելով այդ նպատակով[38]: Բայց միայն Աղբալյանի նախարար դառնալուց հետո են լուծվել կազմակերպչական բոլոր հարցերը՝ բացի շենքի հարցից, ինչի պատճառով էլ համալսարանը բացվել է Ալեքսանդրապոլի առևտրական գիմնազիայի շենքում: Դասերը սկսվել են փետրվարի 1-ին: Համալսարանի բացումը կայացել է մեծ շուքով, ներկա են գտնվել երկրի նախարարների խորհուրդը ողջ կազմով, արտասահմանյան դիպլոմատական և դիվանագիտական ներկայացուցիչներ, քաղաքների, կուսակցութ-

[35] Հ ա կ ո բ յ ա ն. 2015, 26, 30:
[36] Վ ր ա ց ե ա ն. 1957գ, 53:
[37] Տե՛ս Ա ն ա ն յ ա ն. 2002, 55–66, Վ ր ա ց ե ա ն. 1957գ, 53:
[38] Ա ն ա ն յ ա ն. 2002, 66:

յունների, հասարակական կազմակերպությունների ու մամուլի ներկայացուցիչներ: Համալսարանի ռեկտոր (տեսուչ), պրոֆեսոր Յու. Ղամբարյանի բացման խոսքից հետո «Հանդէսի նախագահ ընտրուեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր Ն. Աղբալեանը, որը մի ճառով բնորոշեց համալսարանի կատարելիք դերը հայ ժողովրդի կեանքում»[39]: Հայաստանի առաջին Հանրապետությունն ապրում էր իր կարճատև պատմության երկրորդ ծանր ձմեռը. այդ պայմաններում համալսարանի հիմնումը բացառիկ սխրանք էր, պատմական մի իրադարձություն, որի նշանակությունը դժվար է գերագնահատել: Ն. Աղբալյանն այդ պատմությունը կերտողներից էր, ու նաև այդ պատճառով նրա անունը հավիտյան պետք է հիշվի հայ ժողովրդի մեծագույն զավակների շարքում[40]:

1920 թ. մայիսի 5-ից՝ մայիսյան խռովությունների պատճառով Ա. Խատիսյանի ղեկավարած կառավարության հրաժարականից հետո, Աղբալյանն այլ գործերով էլ է զբաղվել՝ իր նախասիրություններին և հակումներին բոլորովին անհարիր, իր ասելով՝ «նախագահ Կարսի Մայիսեան ապստամբութիւնը վերացնող մասնաճիւղի, Շարուրի ցանքերի բաշխման եւ օգտագործման վարիչ»[41], այն է՝ «բրինձի և լքեալ գոյքերի հաւաքման կոմիսար Շարուրում: Կրթական նախարարը ո՛ւր, բրինձի կոմիսարը ուր ... »[42],– ցավով ու ափսոսանքով գրել է Ս. Վրացյանը:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1921 թ. փետրվարի 9-ին, դրժելով իրենց տված անձեռնմխելիության խոստումը, Հայաստանի նոր իշխանությունները շատերի հետ ձերբակալել են նաև Ն. Աղբալյանին ու բանտարկել Երևանի բանտում: Երկու ամսից էլ պակաս ժամանակամիջոցում նախկին նախարարը երկու անգամ փրկվել է ստույգ մահից, առաջին անգամ՝ փետրվարի 18-ին, երբ ապստամբած ժողովուրդը բանտից ազատել է մտքում կյանքին արդեն հրաժեշտ տված բանտարկյալներին[43], ապա՝ ապրիլի սկզբին, երբ բոլշևիկների՝ երկրորդ անգամ Երևան մտնելուց առաջ քաղաքից փախած հիվանդ Աղբալյանին այլ փախստականներ փրկել են ձյունների մեջ սառչելուց[44]:

Օտար ափերում. մանկավարժն ու գիտունը

1921 թ. ապրիլին փչած տիկերից շինված լաստերով Արաքսն անցնելով՝ Ն. Աղբալյանը հաստատվել է Թավրիզում և զբաղվել դասախոսություններ կարդալով ու ՀՅԴ պատմության համար նյութեր հավաքելով: 1920-ական թվականները նրա կյանքում նշանավորվել են մանկավարժական և գրական գործունեությամբ, անդուլ աշխատանքով ու նոր պայմաններում իր տեղը գտնելու փնտրտուքով: Նրա համար միշտ առաջնայինը եղել է հայ ոգին վառ պահելու,

---

[39] *«Ժողովուրդ» (Երևան), 04. II. 1920: Աղբալյանի ճառի որոշ մանրամասներ տե՛ս* Ա ն ա ն յ ա ն. *2002, 67:*

[40] *Այսօր Ն. Աղբալյանի բրոնզաձույլ կիսանդրին զարդարում է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահը՝ խորհրդանշելով ականավոր գործչի դերը համալսարանի հիմնադրման գործում:*

[41] Ա ղ բ ա լ ե ա ն. *1948, 204:*

[42] Վ ր ա ց ե ա ն. *1957գ, 55:*

[43] *Մ. Ն. 1921:*

[44] Ա լ ա ն ե ա ն. *1951, 16–18:*

հայ լեզուն, գրականությունն ու մշակույթը պահպանելու և սերունդներին փոխանցելու մտահոգությունը: Հենց այդ մտահոգությունն էլ Աղբալյանին և նրա մի խումբ համախոհների ստիպել է 1928 թ. Կահիրեում ստեղծել մի հաստատություն, որն իր վրա կվերցներ այդ ծանր առաքելությունը: 1928 թ. մայիսի 28-ին մի խումբ հայորդիներ, որոնց թվում էին Ն. Աղբալյանը, Լ. Շանթը և 7 այլ գործիչներ, ստեղծել են այդ հաստատությունը՝ անվանելով այն Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերություն (այժմ՝ Համազգային հայ կրթական և մշակութային միություն): 1930 թ. մարտի 3-ին ընդամենը 14 աշակերտների առջև իր դռներն է բացել Բեյրութի Հայ ճեմարանը (այժմ՝ Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարան)՝ Աղբալյանի ու Շանթի ստեղծագործ մտքի ու անկոտրում կամքի երկրորդ արգասիքը, որը շուտով դարձել է Մերձավոր Արևելքի հայ լավագույն կրթօջախներից:

1930 թ. մարտից մինչև իր մահն Աղբալյանն առանց դադարի հայ գրականություն և գրաբար է դասավանդել Հայ ճեմարանում՝ տարբեր գաղթօջախներից ժամանած հայ տղաներին ու աղջիկներով կրթելով ու դաստիարակելով ոչ միայն խոր գիտելիքներով, այլև իր մարդկային բարձր նկարագրով՝ հաճախ զարմացնելով նրանց իր անհատակ իմացության փայլատակումներով ու հմայելով անգերազանցելի հռետորի իր անուրանալի տաղանդով: Շատերը նրանցից, ովքեր բախտ են ունեցել հանրագիտարանային գիտելիքների տեր մանկավարժի ու հռետորի աշակերտը լինելու, հետագայում մեծ ջերմությամբ են հիշել իրենց ճեմարանական տարիներն ու մեծ ուսուցչին, որն իրեն անմնացորդ նվիրել էր հայ երեխաների հայեցի կրթության գործին: Նրանց մեջ քիչ չեն եղել հետագայում գրող, խմբագիր, կուսակցական և հանրային գործիչ դարձած պատանիներն ու աղջիկները: Հայ ճեմարանի շրջանավարտների համար, անկասկած, անմոռանալի իրադարձություն են դարձել «վկայականներու բաշխման հաւաքոյթները», որոնցից մեկի ժամանակ՝ մահվանից մեկ տարի առաջ, Աղբալյանը հետևյալ ընորոշ խոսքերն է ուղղել նրանց. «Մեր նպատակը եղաւ պատրաստել եւ հանրութեան տալ գիտակից հայեր: Մենք մեր աշակերտներուն տուած ենք ազգային ոգին. շրջանաւարտներուն կը մնայ այդ ոգին վառ պահել կեանքին մէջ ալ: Մեր գերագոյն ցանկութիւնն է, որ մեր շրջանաւարտները առաջին հերթին գնահատէին Ազգը, ապա միայն ընտանիքը»[45]:

Ն. Աղբալյանի՝ որպես Բեյրութի Հայ ճեմարանի նվիրյալի կերպարն ամբողջացնող մեկ փաստ էլ իր դրքում բերել է նրա լավագույն սաներից մեկը՝ Անդրանիկ Ծառուկյանը. 1933 թ., երբ ԱՄՆ-ից ստացվող ֆինանսական միջոցների ուշացման պատճառով Հայ ճեմարանը կանգնել է փակման վտանգի առջև, հենց Աղբալյանի առաջարկով է որոշում ընդունվել կրճատել յոթ մնայուն ուսուցիչների (ներառյալ դասավանդող երկու տնօրեններին) աշխատավարձը, մինչև հասնեն ավելի լավ ժամանակներ[46]: Ավելորդ է ասել, որ առանց այն էլ ցածր աշխատավարձի կրճատումը բացասական հետևանքներ է ունեցել տնօրենների և ուսուցիչների, մասնավորապես՝ Աղբալյանի նյութական վիճակի վրա, որն իր ստացածի մի մասն ուղարկում էր Հայաստան՝ ընտանիքին[47]:

---

[45] «Ակօս» (Պէյրութ), 1954, № 8, 70:

[46] Տե՛ս Ծ ա ռ ո ւ կ յ ա ն. 2019, 143–144:

[47] Տե՛ս Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 166–170:

1930–1940-ական թվականներին ևս մանկավարժությանը զուգահեռ Ն. Աղբալյանը զբաղվել է գրական աշխատանքով, հանդես է եկել ելույթներով ու դասախոսություններով, աշխատակցելով տարբեր պարբերականների՝ գրել է հոդվածներ և ուսումնասիրություններ՝ իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնելով հայոց լեզվի ու իր սրտին այնքան մոտ հայ հին գրականությանը: 1937 թ. Բեյրութում լույս է տեսել «Բանասէրի յուշագիրը» գիրքը՝ նվիրված հայոց լեզվի ուսումնասիրությանը, 1944-ին՝ «Պատմութիւն Հայոց գրականութեան» գիրքը, իսկ 1951-ին՝ արդեն նրա մահից հետո՝ «Դասախոսութիւններ հայ մատենագրութեան մասին» գիրքը, որոնք ուղղակի վկայությունն են նրա լեզվաբանական ու գրականագիտական բացառիկ ունակությունների և այսօր էլ ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ: Գուցե նոր գրքեր ևս ստեղծեր նրա բեղուն գրիչը, եթե 1947-ին չընդհատվեր նրա կյանքի թելը: «Յոյս ունիմ, որ այս թերատ վաստակով պիտի կարենամ խառնուիլ Բանի սպասաւորաց երամին եւ արժանի լինել յիշատակութեան նրանց հետ եւ նրանց շարքում»[48],– իրեն հատուկ համեստությամբ գրել է «Պատմութիւն Հայոց գրականութեան» գրքի «Գիրք և գրիչ» գլխի վերջում: Իր կյանքով և գրական ժառանգությամբ Աղբալյանն անվերապահորեն նվաճել է այդ իրավունքը:

Մեծ տառապյալը

Տարիների հեռվից ուսումնասիրելով Ն. Աղբալյանի կյանքի զիգզագները, նրա գործունեությունն ընդհանրապես և ամփոփելով նրա կյանքի հետագիծը՝ մի բնական հարց է առաջանում. երջանի՞կ մարդ էր արդյոք Նիկոլ Աղբալյանը: Նա, անկասկած, երջանկության բազմաթիվ պահեր է ապրել իր ոչ կարճ կյանքի ընթացքում, բայց երջանկությունը հարաբերական բան է, և մարդ չի կարող իր ողջ կյանքում երջանիկ լինել, մանավանդ իր ազգի համար ապրող մարդը, առավել ևս՝ իր ազգի համար ապրող հա՛յ մարդը: Աղբալյանի պարագայում այս ճշմարտությունն ավելի քան ակնհայտ է. նա երկար տարիներ ապրել է հայրենիքից և ընտանիքից հեռու՝ երկու մեծ ցավ, որ տասնամյակներ շարունակ կրել է սրտում: Թափառել է երկրից երկիր, մինչև որ Լիբանանի հյուրընկալ հողը դարձել է իր երկրորդ հայրենիքը:

Իսկ ընտանի՞քը ... Ընտանիքն այդպես էլ մնացել է Խորհրդային Հայաստանում՝ երկրում, որն այլևս իրենը չէր: Ճիշտ է, Երևանը լքելուց առաջ տնեցիներին խոստացել էր՝ «Մի՛ անհանգստացեք. ես կվերադառնամ, կանցնի մեկ-երկու տարի՝ կվերադառնամ»[49], բայց չվերադարձավ ո՛չ մեկ-երկու տարի, ո՛չ էլ երկար տարիներ անց: Խորհրդային իշխանությունը 1922-ին փորձ է արել նրան հայրենիք վերադարձնելու, այդ նպատակով նույնիսկ թույլ են տվել նրա կնոջը՝ Հրարփիին, այցելել Թավրիզ ու տեսակցել ամուսնուն[50]: Բայց Աղբալյանը չի ցանկացել վերադառնալ. հավանաբար, նրա հիշողության մեջ դեռ թարմ էին Երևանի բանտում կրած սարսափները: Այնուհետև երկար տարիներ անց՝ 1945 թ. հունիսին, Էջմիածնում կայացած Համազգային եկեղեցական ժողովի կողմից

[48] Աղբալեան. 1970, 236:
[49] Անանյան. 2002, 77:
[50] Վրացեան. 1957դ, 42, Հովհաննիսյան. 1993:

Ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Գևորգ Զ Զորեքչյանը և ժողովի պատվիրակ Ավ. Իսահակյանը Փարիզից ժամանած պատվիրակ Արտավազդ արքեպիսկոպոսի միջոցով, ենթադրվում է՝ կառավարության անունից, կրկին հրավիրել են Աղբալյանին Հայաստան, ու նա կրկին մերժել է[51]*: Այս մերժումը, սակայն, հակասում է նրա երկար տարիների բարեկամ Խոսրով Թյությունճյանի վկայությանը, թե «Նիկոլ Աղբալեան հեռացաւ մեզմէ, պարտասուն և հիասթափ՝ հայկական Սփիւռքէն, հայեացքը հայրենիքին ուղղած, ուր զօրաւոր փափաք ունէր իր հարուստ կեանքի վերջին օրերը անցնելու»*[52]*:*

Ինչևէ, նա աչքերը հավիտյան փակել է հայրենիքից ու ընտանիքից հեռու, քանի որ գիտակցաբար չի ցանկացել (կամ չի կարողացել) վերադառնալ, իսկ կնոջն ու երեք երեխաներին, հակառակ ձեռնարկված փորձերին, թույլ չեն տվել հեռանալ Հայաստանից՝ հայտարարելով. «Դուք կմնաք որպես պատանդներ, որպեսզի Ձեր ամուսինը այնտեղ կուսակցական գործունեություն չծավալի»[53]*: Իշխանությունների այս քայլը մասամբ աշխատել է. Աղբալյանը թեև չի հրաժարվել կուսակցական գործունեությունից, բայց Խորհրդային Միության ու Խորհրդային Հայաստանի նկատմամբ չի ցուցաբերել այն մարտնչող անհանդուրժողական, թշնամական վերաբերմունքը, որը ցուցաբերել են Շանթը և բազմաթիվ այլ վտարանդիներ: Նույն Խ. Թյությունճյանի վկայությամբ՝ «Ն. Աղբալեանը առանձին գուրգուրանքով և խանդավառութեամբ կը վերաբերէր հայրենադարձ շարժումին և մեծ հոյսեր կը կապէր անոր»*[54]*:*

Ն. Աղբալյանի երեք երեխաներն այդ նույն ժամանակ զրկված էին հայրական սիրուց, հայր, որը հեռվից հեռու հետևել է իր երեխաների մեծանալուն ու կարեցածի չափ օգնել նրանց, բայց նրա սիրտն ու հոգին այդ երկարաձիգ տարիների ընթացքում ծվատել է անափ ու անփարատելի կարոտը: «Նա մեծ մի վիշտ ունէր եւ չէր բաժանում ուրիշների հետ»[55]*,– գրել է հուշագիրներից մեկը: Սակայն այդ վիշտը՝ ապրելը հայրենիքից ու ընտանիքից հեռու, և իր տառապանքը ուրիշներից թաքցնելն անհնար էր: Եվ հաճախ են միայնության մեջ կամ հավաքույթների ժամանակ նրա շուրթերից հնչած կարոտի երգին միացել աչքերից թափվող կարոտի արցունքները. «Շատ ատեն հավաքույթներուն պ. Աղբալյանը շատ դարդոտ երկու կարոտի երգ ուներ. ծխիկը վառած կերգեր ու արցունքները կհոսեին այտերեն վար, իրենները հիշելով…*

Ասում ես դիմացիր,
Ես ոնց դիմանամ,
Թղթիկ մ՚ալ չես գրում
Դարդերդ իմանամ»[56]:

---

[51] *«Ակօս» (Պէյրութ), 1947, ԻԱ–ԻԲ, 148–149, Լ ա զ ե ա ն. 1949, 272:*

[52] *Տե՛ս Թ ի ւ թ ի ւ ն ճ ե ա ն. 1947, 5:*

[53] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1993:*

[54] *Թ ի ւ թ ի ւ ն ճ ե ա ն. 1947, 5: Խոսքը 1946 թ. սկված, այսպես կոչված, Մեծ հայրենադարձության մասին է, որի ժամանակ՝ 1946–1948 թթ., հայրենիք եկան 90 հազար սփյուռքահայեր:*

[55] *Մ ա ր ո ւ թ ե ա ն. 1977, 2:*

[56] *Ա ն ա ն յ ա ն. 2002, 82–83, Լ ա զ ե ա ն. 1949, 272, Ժ ա մ կ ո չ ե ա ն. 1954, 32:*

Իսկ մահից հետո հագուստի գրպաններից մեկում հայտնաբերել են կնոջ՝ Երևանից ուղարկած խմբանկարը՝ ինքն ու արդեն մեծացած երեք երեխաները…

Այսպես է ապրել ու տառապել հայ մտքի լավագույն մշակներից մեկը, և նա, իրավամբ, արժանի է խոնարհումի ոչ միայն բեղուն գործունեության ու գրական ժառանգության, այլև մեծ տառապանքի ու այդպես էլ չփարատված կարոտի համար:

Հավերժի ճամփորդը. դժվար վերադարձ

Կենդանության օրոք և մահից հետո Սիյուռքում Ն. Աղբալյանը հարգանքի ու սիրո պակաս չի զգացել: Եղել է սիրված մանկավարժ, հանրային ու քաղաքական գործիչ, դասախոս և ընկեր, պարզապես հայ մարդ, որի հետ հետաքրքիր էր խոսելն ու շփվելը: Նրա գործունեությունը՝ անցյալ և ներկա, խոսքի ուժը, մարդկային կերպարն ու տխուր ճակատագիրը իր անձի շուրջ ստեղծել են սիրո, ակնածանքի, գնահատանքի ու մեծարանքի մի լուսապսակ և ստիպել 20 հազար մարդու՝ հայերի ու ոչ միայն, մասնակցել նրա թաղման հանդեսին 1947 թ. օգոստոսի 19-ին Բեյրութի Ազգային գերեզմանատանը (աննախադեպ և հետագայում էլ չկրկնված երևույթ)[57]: Բայց Աղբալյանի իսկական մեծությունը զգացվել է նրա մահից հետո թերևս. սկսվել են նրա գրական, մանկավարժական, հանրային, քաղաքական և պետական գործունեության գնահատումն ու արժևորումը: Աղբալյանի մասին գրվել են տասնյակ հուշեր ու հոդվածներ, տպագրվել են նրա գրականագիտական աշխատություններն ու, իր բառով ասած, գրադատականները, քաղաքական և հրապարակախոսական հոդվածներն ու ելույթները, կայացել են նրա հիշատակին նվիրված սգահանդեսներ: Սիյուռքահայ մտավորականներն ու գործիչները և առաջին հերթին նրանք, ովքեր տարիներ շարունակ աշխատել էին Աղբալյանի հետ (Ս. Վրացյան, Գ. Իփեկյան և ուրիշներ) և աշակերտել նրան (Մուշեղ Իշխան, Գ. Բանյան, Ա. Ծառուկյան և ուրիշներ), իրենց գրվածքներում բացահայտել են Աղբալյան քննադատի, գրականագետի, պատմաբանի, քաղաքական և պետական գործչի, մանկավարժի և դեղագետի տեղն ու դերը XIX դ. վերջի – XX դ. առաջին կեսի հայ գրական, քաղաքական, պետական, հանրային կյանքում, հայ երեխաներին ազգային կրթություն տալու գործում, ընդգծել նրա գործունեության ու գրական ժառանգության մնայուն արժեքը և կարևորությունը Սիյուռքում հայ ոգին վառ պահելու, հայ լեզուն ու մշակույթն անխոնջ պահպանելու ու զարգացնելու գործում:

Գնահատականները, որ տրվել են Ն. Աղբալյանին, ընդհանուր առմամբ, ճիշտ են ու հիմնավորված, թեև երբեմն գրված լինելով նրա մահվան անմիջական ազդեցության տակ՝ կրում են զգացական բնույթ: Աղբալյանը կրթել է սերունդներ, «մասնաւորապէս Միջին Արեւելքի մեր երիտասարդ մտաւորականները մեծ բան կը պարտին Նիկոլի շունչին և լուսաւոր միտքերուն»[58],– գրել է Գ. Լազյանը: Բայց միայն Մերձավոր ու Միջին Արևելքի հայությունը չէ, որ կրել է Աղբալյանի գաղափարների ազդեցությունը և առաջնորդվել դրանցով: Նա մտքի առաջնորդ է եղել աշխարհասփյուռ ողջ հայության համար և այդպիսին է մնացել իր մահից հետո դեռ երկար ժամանակ, ինչպես բնութագրել է

[57] Ժամկոչեան. 1954, 33:
[58] Լազեան. 1949, 271:

նրան Բեյրութի «Ազդակ» օրաթերթը մահվան 13-րդ տարելիցի առիթով տպագրված առաջնորդողում. «Աղբալեան խորհրդանիշ մըն է, հայ ժողովուրդի անմահութեան հանդէպ մեր հաւատքը զօրացնող անզուգական դեմք մը, որ քուրմի մը ջերմեռանդութեամբ մօտեցաւ իր դաւանած միակ կրօնքին՝ հայ ժողովուրդին և անոր ստեղծագործող հանճարին»[59]:

Մայր հայրենիքում կենդանության օրոք Ն. Աղբալյանին հազվադեպ են հիշել, մահից հետո էլ տասնամյակներ շարունակ նրա անունն ու վաստակը հետևողականորեն անտեսվել են: Այդպես շարունակվել է գրեթե մինչև 1970–1980-ական թվականները, երբ հայտնի գրականագետներ Էդ. Ջրբաշյանի և Ժ. Քալանթարյանի գրքերում կարճ անդրադարձներով[60], և Գ. Անանյանի «Նիկոլ Աղբալյանը քննադատ» դասախոսությամբ ու հոդվածներով, նրա նամակների հրապարակումով սկսվել է Աղբալյանի ուշացած, բայց անխուսափելի «վերադարձը» հայրենիք: Մանավանդ Գ. Անանյանի հետևողական ջանքերի շնորհիվ սառույցը կոտրվել է, հետագա տարիներին՝ արդեն Հայաստանի անկախացումից հետո, լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ Ն. Աղբալյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ, իսկ 2000-ական թվականներին տպագրվել են նրան նվիրված մենագրություններ, Աղբալյանի երկու հատորները՝ «Նամակներ, պաշտոնական գրություններ» և «Ընտրանի» (2005), «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցության մասին» աշխատությունը (1992 և 2005), կազմվել է 1896–1920 թթ. մամուլում տպագրված երկերի մատենագիտությունը: Այս ամենը լուրջ ներդրում է աղբալյանագիտության մեջ և տալիս է շատ հարցերի պատասխաններ: Այդուհանդերձ, այս ասպարեզում դեռևս շատ բան է մնում անելու. նրա կյանքի ու գործունեության որոշ դրվագներ բավականաչափ լուսաբանված չեն, գրական ժառանգության՝ առայժմ հասարակությանն անծանոթ կամ քիչ հայտնի երկերի ուսումնասիրության ու արժևորման հարցը նույնպես արդիական է:

1991 թվականից Երևանում գործում է ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը, նույն թվականին Երևանի № 19 դպրոցը (նախկին Ն. Կրուպսկայայի անվան դպրոցը) կոչվել է Նիկոլ Աղբալյանի անունով, Հայաստանի գրողների միությունը սահմանել է ամենամյա «Նիկոլ Աղբալյան» գրական մրցանակ գրականագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումների համար, իսկ 2005 թ. նոյեմբերին Երևանում տեղի է ունեցել գիտաժողով՝ նվիրված Աղբալյանի ծննդյան 130-ամյակին, որի մասնակիցներն ամենայն ուշադրությամբ քննության նյութ են դարձրել մեծ մտավորականի կյանքի և գործունեության, գրական ժառանգության արժևորմանն ուղղված բազմաթիվ հարցեր: Այս ամենը հայրենիքի ուշացած, բայց ոչ անտեղի երախտագիտությունն է իր կյանքը հայ ժողովրդին անմնացորդ նվիրած գործչին:

Ի վերջո, հայրենիքն էլ է Աղբալյանին մատուցել այն հարգանքը, որին նա Սփյուռքում արժանացել էր տասնամյակներ առաջ: Գնահատականների, բնութագրումների և մեծարանքի խոսքերի մեջ կարելի է նկատել նրան տրված մի բնորոշում, որը հաճախ է հանդիպում և որը նրան լավագույնս է բնութագրում՝

[59] «Ազդակ» (Պէյրութ), 13. VIII. 1960:

[60] Տե՛ս Ջ ր բ ա շ յ ա ն. 1979, 163–167, Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն. 1986, 362–365:

հայ ոգու կրող: Հայ լեզվի, հայ եկեղեցու, հայ գրականության ու մշակույթի, հայոց պատմության խոր իմացություն, պաշտամունք և քարոզ՝ ահա հայ ոգու տարածված ըմբռնումը, որը գեղեցիկ ձևակերպել է Գ. Իփեկյանը. «Իր պաշտածը Հայութիւնն էր, հայ մշակոյթը իր բոլոր տեսակներով, հայ կրօնը, հայ եկեղեցին, հայ լեզուն, հայ պարը, հայ գիրը, հայ պատմութիւնը, հայ գրականութիւնը իր բոլոր երեսներով, հայ երաժշտութիւնը, որուն բոլոր նրբութիւններուն թափանցած էր, հայ ճարտարապետութիւնը, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅ ՄԱՐԴՆ ԷՐ, իր առաւելութիւններով ու թերութիւններով, որոնք յաճախ կը ըլխէին իր առաւելութիւններէն»[61]: Սակայն գեղեցիկ բառերի, ընորոշումների ու բնութագրերի տակ, որպես կանոն, անհասանելի է մնում Աղբալյանի հայ ոգին իր խորքային ըմբռնումով՝ որպես հայի ազգային, անցյալից եկող համապարփակ նկարագիր, և չեն ընդգծվում ու կարևորվում այդ նկարագրի պահպանման՝ Աղբալյանի մատնանշած միջոցներն ու ուղիները՝ որպես հայության ներկան ու ապագան երաշխավորող անհրաժեշտ կռվան: Թերևս մինչ այժմ այդ ոգուն ամենից շատ մոտեցել և նրա խորքային բաղադրիչները բացահայտել է հայտնի գրականագետ Սերգեյ Սարինյանը 1993 թ. գրած իր «Նիկոլ Աղբալյան. գրականագետը, մտածողը, գործիչը» հոդվածում, որտեղ նա նշել է Աղբալյանի «մտավոր որոնումների փիլիսոփայական առանցքը» ամբողջացնող գաղափարը, որի հայտնաբերմանը հետամուտ է եղել նա. «Դա ազգային ոգու, հայոց հոգևոր ու ֆիզիկական կերտվածքի էթնիկական ինքնությունն է»[62]: Այդ ինքնությունն Աղբալյանը հայտնաբերել է հայ ժողովրդի առասպելապատմական անցյալում՝ որպես «հայկական հատկություն», որը միավորում է չորս բաղադրիչ՝ «1. ըմբոստություն, բունություն չհանդուրժելը, 2. անկախության բուռն սերն ու ոգին, 3. շինարարության պաշտամունք, 4. ընտանեկան պատվի սրբություն, հավատարմություն, այլ ցեղերի հետ խառնվելու պժգանք»[63]: Գրականագետը նշել է, ըստ Աղբալյանի, դարերից եկող հայ ոգին ներկայում և ապագայում պահպանելու միակ գրավականը՝ հայ նոր սերնդի ձևավորումը. այդ սերնդի նպատակը պետք է լինի վերադարձնել հային իր պատմական հայրենիքը, և այս գաղափարի խորհրդանիշը Մայիսի 28-ն է՝ հայի դարավոր երազանքների, ձգտումների, ազատասիրության, արժանապատվության, ճիգերի ու տառապանքների ապացույցը. սխրանք, որն իբրև արժեք պետք է փոխանցվի սերնդեսերունդ[64]:

Եզրակացություն

Նիկոլ Աղբալյանն այն բացառիկ գործիչներից է, որոնք իրենց կյանքով ու գործունեությամբ արժանիորեն վաստակել են հայ մշակույթի, հայ գրականության և քաղաքական կյանքի պատմության մեջ իրենց արժանի տեղն ունենալու իրավունքը: Որպես գրականագետ ու քննադատ՝ նա արժևորել է հայ գրականության բարձրարժեք ստեղծագործությունները՝ ճանաչում ապահովե-

[61] Ի փ ե կ ե ա ն. 1951, 9:
[62] Ս ա ր ի ն յ ա ն. 2002, 233, 236:
[63] Ս ա ր ի ն յ ա ն. 2002, 236–237, Ա ղ բ ա լ ե ա ն. 1970, 278:
[64] Ս ա ր ի ն յ ա ն. 2002, 239:

լով մի շարք հեղինակների համար: Որպես մտավորական, հանրային, քաղաքական ու պետական գործիչ՝ նա ամեն ինչ արել է հայ ժողովրդի կյանքը բարվոքելու, նրա ներկան ու ապագան ազատ ու անվտանգ դարձնելու համար: Որպես մանկավարժ՝ նա հիմնադրել է երկու նշանավոր կրթօջախներ՝ Երևանի համալսարանն ու Բեյրութի Հայ ճեմարանը, կրթել ուսումնածարավ հայորդիների բազմաթիվ սերունդներ, որոնց ներարկել է հայ ոգին միշտ վառ պահելու, հայ լեզուն, գրականությունն ու մշակույթը սիրելու իր պատգամները:

Անվանի մտավորականի ու գործչի գրական ժառանգությունն ու գաղափարները, լուսավոր մտքի ճառագումներն այսօր էլ՝ նրա մահից գրեթե 80 տարի անց, չեն կորցրել իրենց այժմեականությունը և կարող են մեծապես օգտակար լինել հայ ժողովրդին իր կյանքի տարբեր բնագավառներում:

Արմեն Մանուկյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ նոր և նորագույն գրականություն, հայ բանահյուսություն, եվրոպական գրականություն: Հեղինակ է ավելի քան 20 հոդվածի:
ORCID: 0000-0002-3050-1055. armenmanukyan@litinst.sci.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազդակ» (Պէյրութ), 13. VIII. 1960:

Ալանեան Ա. 1951, Նիկոլ Աղբալեան. – «Հայրենիք» (Պոսթոն), № 11, էջ 1–18:

«Ալիք» (Թեհրան), 03. I. 1973:

«Ակօս» (Պէյրութ), 1947, № ԻԱ–ԻԲ, էջ 148–149, 1954, № 8, էջ 70:

Աղբալեան Ն. 1944ա, Սայաթ-Նովային հետ. – «Ազդակ» շաբաթօրեակ, 03. III:

Աղբալեան Ն. 1944բ, Սայաթ-Նովային հետ. – «Ազդակ» շաբաթօրեակ, 10. III:

Աղբալեան Ն. 1946, Աւետիք Իսահակեան, դասախոսություն 1946 թ. հունվարի 26-ին՝ նվիրված Իսահակյանի ծննդյան 70-ամյակին. – «Ազդարար» (Պէյրութ), 09. II:

Աղբալեան Ն. 1948, Ինքնակենսագրական տեղեկութիւններ. – «Հայրենիք», տարեգիրք-տօնացոյց 1948 (Պոսթըն), էջ 204–205:

Աղբալեան Ն. 1970, Ամբողջական երկեր, հ. IV, Պատմութիւն Հայոց գրականութեան, Պէյրութ, «Համազգային» հայ մշակութային ընկերակցութեան հրատ., 500 էջ:

Աղբալյան Ն. 1989, Հիշատակարան. – «Մշակույթ» (Երևան), № 2–3, էջ 112–115:

Աղբալյան Ն. 2003, Նամակներ, պաշտոնական գրություններ (կազմեց և ծանոթագրեց Գ. Անանյանը), Երևան, «Հայաստան» հրատ., 276 էջ:

Անանյան Գ. 2002, Նիկոլ Աղբալյան, Երևան, ԵՊՀ հրատ., 313 էջ:

Աստուածատրեան Ա. 1947, Նիկոլ Աղբալեան. – «Հայրենիք», № 6, էջ 54–61:

Արշակունի (Յովհաննիսեան) Ա. 1951, Ն. Աղբալեանի կեանքի վերջին օրերը. – «Հայրենիք», № 2, էջ 75–82:

Գասպարյան Դ. 2022, Եղիշե Չարենցի բանաստեղծությունները (1912–1922). – Եղիշե Չարենց. Երկերի ժողովածու 13 հատորով, հ. 1, Երևան, «Անտարես» հրատ., էջ 343–390:

Թիւթիւնճեան Խ. 1947, Նիկոլ Աղբալեան. – «Ազդարար», 06. IX:

Ժամկոչեան Յ. 1954, Լ. Շանթ եւ Ն. Աղբալեան. – «Ակօս», № 11–12, էջ 28–32:

«Ժողովուրդ» (Երևան), 04. II. 1920:

Իսահակյան Ա. 2017, «Վերնատան» զավակները, Երևան, «Գիտություն» հրատ., 64 էջ:

Իփեկեան Գ. 1951, Նիկոլ Աղբալեան. – Աղբալեան Ն., Դասախօսություններ հայ մատենագրութեան մասին, Պէյրութ, «Համազգային մշակութային ընկերութեան» հրատ., էջ 6–9:

Լազեան Գ. 1949, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 398 էջ:

Լեւոն Շանթը իր մասին. 1960. – «Հայրենիք», № 4, էջ 24–34:

Ծառուկյան Ա. 2019, Հակադիր երկվորյակներ՝ Շանթ-Աղբալյան. – Լևոն Շանթ. Մարդը և գործը, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., էջ 141–159:

Հակոբյան Ա. 2015, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական կառավարման փորձը. – «Վէմ» (Երևան), № 4, էջ 22–40:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 307, ց. 1, գ. 18:

Հովհաննիսյան Ա. 1993, Աղբալյանների ընտանիքը. – «Հայություն» (Երևան), 01–15. IV:

Հովհաննիսյան Ս. 2007, Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը, Երևան, «Գիտություն» հրատ., 340 էջ:

«Հորիզոն» (Թիֆլիս), 02. X. 1912, 20. III. 1913:

Մ. Ն. 1921, Սարսափի օրերը Երեւանի բանտին մէջ. Բանտարկեալի մը յիշատակները. – «Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 12. XI:

Մարութեան Մ. 1977, Նիկոլ Աղբալեան. – «Ալիք», 19. V:

Զրբաշյան է. 1979, Գրական քննադատություն. – Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 138–245:

Սարինյան Ս. 2002, Նիկոլ Աղբալյան. գրականագետը, մտածողը, գործիչը. – Հայոց գրականության երկու դարը, գիրք 3-րդ, Երևան, «Զանգակ-97» հրատ., էջ 231–140:

Վրացեան Ս. 1957ա, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 9, էջ 62–72:

Վրացեան Ս. 1957բ, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 10, էջ 49–58:

Վրացեան Ս. 1957գ, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 11, էջ 51–59:

Վրացեան Ս. 1957դ, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 12, էջ 41–47:

Վրացեան Ս. 1964, Բան մը Սայաթ Նովայի մասին. – «Բազին» (Պէյրութ), № 1, էջ 40–41:

Քալանթարյան Ժ. 1986, Հայ գրականագիտության պատմություն (5–19-րդ դարեր), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 428 էջ:

REFERENCES

Aghbalean N. 1944a, Sayat’-Novayin het. – «Azdak» shabat’oreak, 03. III. (In Armenian).

Aghbalean N. 1944b, Sayat’-Novayin het. – «Azdak» shabat’oreak, 10. III. (In Armenian).

Aghbalean N. 1946, Avetik’ Isahakean, dasakhosut’yun 1946 t’. hunvari 26–in, nvirvats Isahakyani tsnndyan 70-amyakin. – «Azdarar» (Peyrut’), 09. II. (In Armenian).

Aghbalean N. 1948, Ink’nakensagrakan teghekut’yunner.– «Hayrenik’» taregirk’-tonats’uyts’ 1948 (Post’yn), ej 204–205 (In Armenian).

Aghbalean N. 1970, Amboghjakan yerker, h. IV, Patmut’yun Hayots’ grakanut’ean, Peyrut’, «Hamazgayin» hay mshakut’ayin ynkerakts’ut’ean hrat., 500 ej (In Armenian).

Aghbalyan N. 1989, Hishatakaran. – «Mshakuyt’» (Yerevan), № 2–3, ej 112–115 (In Armenian).

Aghbalyan N. 2003, Namakner, pashtonakan grut’yunner (kazmets’ yev tsanot’a-grets’ G. Ananyany), Yerevan, «Hayastan» hrat., 276 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

«Akos» (Peyrut'), 1947, № IA-IB, ej 148–149, 1954, № 8, ej 70 (In Armenian).

Alanean A. 1951, Nikol Aghbalean. – «Hayrenik'» (Post'on), № 11, ej 1–18 (In Armenian).

«Alik'» (T'ehran), 03. I. 1973 (In Armenian).

Ananyan G. 2002, Nikol Aghbalyan, Yerevan, YePH hrat., 313 ej (In Armenian).

Arshakuni (Hovhannisean) A. 1951, N. Aghbaleani keank'i verjin orery. – «Hayrenik'» (Post'on), № 2, ej 75–82 (In Armenian).

Astvatsatrean A. 1947, Nikol Aghbalean. – «Hayrenik'», № 6, ej 54–61 (In Armenian).

«Azdak», 13. VIII. 1960(In Armenian).

Gasparyan D. 2022, Yeghishe Ch'arents'i banasteghtsut'yunnery (1912–1922). – Yeghishe Ch'arents', Yerkeri zhoghovatsu 13 hatorov, h. 1, Yerevan, «Antares» hrat., ej 343–390 (In Armenian).

Hakobyan A. 2015, Hayastani arajin hanrapetut'yan khorhrdaranakan karavarman p'vordzy. – «Vem» (Yerevan), № 4, ej 22–40 (In Armenian).

Hayastani azgayin arkhiv, f. 307, ts'. 1, g. 18 (In Armenian).

«Horizon» (T'iflis), 02. X. 1912, 20. III. 1913 (In Armenian).

Hovhannisyan A. 1993, Aghbalyanneri yntanik'y. – «Hayut'yun» (Yerevan), 01–15. IV (In Armenian).

Hovhannisyan S. 2007, T'umanyany yev Hay groghneri kovkasyan ynkerut'yuny, Yerevan, «Gitut'yun» hrat., 340 ej (In Armenian).

Ip'ekean G. 1951, Nikol Aghbalean. – Aghbalean N., Dasakhosut'yunner hay matenagrut'ean masin, Peyrut', «Hamazgayin mshakut'ayin ynkerut'ean» hrat., ej 6–9 (In Armenian).

Isahakyan A. 2017, «Vernatan» zavaknery, Yerevan, «Gitut'yun» hrat., 64 ej (In Armenian).

Jrbashyan E. 1979, Grakan k'nnadatut'yun. – Hay nor grakanut'yan patmut'yun, h. 5, Yerevan, HSSH GA hrat., ej 138–245 (In Armenian).

K'alant'aryan Zh. 1986, Hay grakanagitut'yan patmut'yun (5–19-rd darer). – Yerevan, Yevani hamalsarani hrat., 428 ej (In Armenian).

Lazean G. 1949, Demk'er hay azatagrakan sharzhumen, Gahire, tp. «Husaber», 398 ej.

Levon Shant'y ir masin. 1960. – «Hayrenik'», № 4, ej 24–34 (In Armenian).

M. N. 1921, Sarsap'i orery Yerevani bantin mej. Bantarkeali my hishataknery. – «Chakatamart» (K. Polis), 12. XI. (In Armenian).

Marut'ean M. 1977, Nikol Aghbalean. – «Alik'», 19. V. (In Armenian).

Sarinyan S. 2002, Nikol Aghbalyan, grakanagety, mtatsoghy, gortsich'y. – Hayots' grakanut'yan yerku dary, girk' 3-rd, Yerevan, «Zangak-97» hrat., ej 231–140 (In Armenian).

Tsarukyan A. 2019, Hakadir yerkvoryakner, Shant'-Aghbalyan. – Levon Shant'. Mardy yev gortsy, Yerevan, «Tigran Mets» hrat., ej 141–159 (In Armenian).

T'yut'yunchyan Kh. 1947, Nikol Aghbalean. – «Azdarar» (Peyrut'), 06. IX. (In Armenian).

Vrats'ean S. 1957a, Nikol Aghbaleani masin. – «Akos» (Peyrut'), № 9, ej 62–72 (In Armenian).

Vrats'ean S. 1957b, Nikol Aghbaleani masin. – «Akos», № 10, ej 49–58 (In Armenian).

Vrats'ean S. 1957c, Nikol Aghbaleani masin. – «Akos», № 11, ej 51–59 (In Armenian).

Vrats'ean S. 1957d, Nikol Aghbaleani masin. – «Akos», № 12, ej 41–47 (In Armenian).

Vrats'ean S. 1964, Ban my Sayat' Novayi masin. – «Bagin», № 1, ej 40–41 (In Armenian).

Zhamkoch'ean H. 1954, L. Shant' yev N. Aghbalean. – «Akos», № 11–12, ej 28–32 (In Armenian).

«Zhoghovurd» (Yerevan), 04. II. 1920 (In Armenian).

НИКОЛ АГБАЛЯН: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ

АРМЕН МАНУКЯН

Р е з ю м е

Ключевые слова: Никол Агбалян, Тифлис, Саят-Нова, армянская средневековая литература, литературоведение, министр, эмиграция, Армянский лицей Бейрута.

Никол Агбалян (1875–1947) – один из выдающихся армянских деятелей конца XIX и первой половины XX века, литературовед, критик, общественный, политический, государственный деятель и педагог. На его становление как человека, армянина и деятеля большое влияние оказали место его рождения – квартал Авлабар в Тифлисе, творчество Саят-Новы, армянская средневековая литература, европейская и русская литература и критическая мысль, неоценима также роль Армянской Апостольской церкви. Начало литературной деятельности Агбаляна восходит к 1896 г., когда была опубликована его рецензия в тифлисском журнале «Мурч». За годы дологой творческой деятельности им были написаны сотни литературных, критических, публицистических и лингвистических работ, многие из которых не потеряли своего значения и в наши дни.

Во второй половине 1910-х годов Агбалян, по велению времени, больше занимался политической деятельностью, был одним из организаторов армянских добровольческих полков, затем – членом Национального бюро (1912–1917) и сменившего его Национального совета (1917–1918). В мае 1918 года он активно участвовал в процессе обретения Арменией независимости: сначала стал депутатом парламента, а в 1919–1920 годах развернул широкую деятельность в качестве министра народного образования и искусств Республики Армения.

В апреле 1921 года, после установления советской власти в Армении в декабре 1920 года, Агбалян эмигрировал в Персию. В течение долгих лет эмиграции, постоянно испытывая ностальгию по родине, он занимался в основном педагогической и литературной деятельностью. В мае 1928 года, в день 10-й годовщины независимости Армении, вместе с Левоном Шантом и еще семью единомышленниками он основал Армянское образовательное

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

и издательское общенациональное товарищество (ныне Общенациональный армянский образовательный и культурный союз), которое по сей день успешно продолжает свою деятельность. В 1929 году Агбалян и Шант открыли в Бейруте Армянский лицей, где многие поколения армян диаспоры получили образование на родном языке. В этом же учебном заведении Агбалян до конца своих дней преподавал армянскую литературу и древнеармянский, прививая армянским детям любовь к родному языку и литературе, армянской истории и культуре.

За свою плодотворную деятельность Агбалян снискал огромную любовь и уважение в диаспоре, между тем в Советской Армении о нем вспомнили лишь в конце 1970-х годов. «Возвращение» на родину произошло уже после обретения Арменией независимости в 1991 году, и сегодня он по праву занимает достойное место в ряду известных армянских деятелей.

Армен Манукян – к. ф. н., старший научный сотрудник отдела текстологии Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: новая и новейшая армянская литература, армянский фольклор, европейская литература. Автор более двадцати статей.
ORCID: 0000-0002-3050-1055. armenmanukyan@litinst.sci.am

NIKOL AGHBALYAN: LIFE AND ACTIVITY

ARMEN MANUKYAN

Summary

Keywords: Nikol Aghbalyan, Tiflis, Sayat-Nova, Armenian medieval literature, literary studies,minister, emigration, Armenian Lyceum in Beirut.

Nikol Aghbalyan (1875–1947) was one of the outstanding Armenian figures of the late 19th and first half of the 20th centuries, a literary critic, public and political figure, statesman and teacher. His formation as an individual, an Armenian and public figure was greatly influenced by his birthplace (Havlabar quarter in Tiflis), the art of Sayat Nova, Armenian medieval literature, European and Russian literature and critical thought; it should be also mentioned the priceless role of the Armenian Apostolic Church. Aghbalyan's literary activity began in 1896 with a review published in the «Murch» journal in Tiflis. Over the years of his long creative activity, he wrote hundreds of literary, critical, journalistic and linguistic works many of which have not lost their importance even today.

In the second half of the 1910s, Aghbalyan, at the behest of time, was more involved in political activities, he was one of the organizers of the Armenian volunteer regiments, then he was a member of the National Bureau (1912–1917) and then a member of the National Council (1917–1918) that succeeded the

National Bureau. In May 1918, he actively participated in the process of gaining Armenia's independence; first, he became a member of the Parliament and in 1919–1920, he launched extensive activities as Minister of Education and Arts of the Republic of Armenia.

In April 1921, after the establishment of the Soviet power in Armenia in December 1920, Aghbalyan immigrated to Persia. During the long years of immigration, constantly feeling homesick, he was mainly engaged in pedagogical and literary activities. In May 1928, on the day of the 10th anniversary of Armenia's independence, he, together with Levon Shant and seven other like-minded people, founded the Armenian Educational and Publishing Nationwide Partnership (now Nationwide Armenian Educational and Cultural Society), which successfully continues its activities to this day. In 1929, Aghbalyan and Shant opened the Armenian Lyceum in Beirut, where many generations of Diaspora Armenians received education in their mother tongue. In this same educational institution, Aghbalyan taught Armenian literature and old Armenian until the end of his days, instilling in Armenian children love for their native language and literature, Armenian history and culture.

For his fruitful work, Aghbalyan earned great love and respect in the Diaspora, while in the Soviet Armenia his name was remembered only in the late 1970s. His "return" to his homeland took place after Armenia gained independence in 1991, and today he rightfully occupies his worthy place among the great Armenian figures.

Armen Manukyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Textology Derartment of the M. Abeghyan Institute of Literature of NAS RA. Scientific interests: modern and contemporary Armenian literature, Armenian folklore, European literature. Author of more than twenty articles.
ORCID: 0000-0002-3050-1055. armenmanukyan@litinst.sci.am

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2